1. Եգիպտոսի Աղէքսանդրիա քաղաքում Սմբատ Բիւրատի և Երուանդ Սրմաքէշխանլեանի խմբագրութեամբ «Սիսուան» ամսաթերթը, բաղկացած 32 էջերից և 5 ռուբլի բաժնեգնով։

2. Պարիզ քաղաքում «Կռունկ» եռամսեայ գեղարուեստական հանդէսը՝ Կ. Գալֆայեանի խմբագրութեամբ։ Հանդէսը հրատարակուելու է հայերէն և ֆրանսերէն լեզուներով. Բաժն. 4 ռուբլի։

3. Շուէյցարիայի Լօզան քաղաքում տարուայ օգոստոսից հրատարակւում է «Գիտութիւն» պատկերազարդ ամսաթերթը Մ. Նալբանդեանի խմբագրութեամբ։ Բաժն. 5 ռուբլի։

4. Աղէքսանդրիայում Կ. Գալֆայեանի խմբագրութեամբ «Առողջապահութիւն» դիտական, բժշկական ու փորձնա—հոգեբանական եռամսեայ հանդէսը։ (բաժն. 5 ռ.)։

5. Աղէքսանդրիայում դկտ. Ց. Փաշաեանի ձեռքով «ընդարձակ դպրոցական առողջապահութիւն» ուսուցիչների, աշակերտների և ծնողների համար։ Գինն 2 ռուբլի։

ՌՈՒՍ «ՆՈՎՈՅԵ ՍՊԱԶՐԵՆԻԷ» ԼՐԱԳԻՐԸ

«Նովոյե սպազրենիէ» ամենօրեայ լրագիրը, որ 14 տարուց ի վեր հրատարակւում էր եղբայրներ իշխ. Թումանեանների ձեռքով, այս դեկտեմբեր ամսից անցաւ «Тифл. листокъ»-ի նախկին խմբագիր պ. Ռ. Գալանթարեանի ձեռքը։ Եղբ. Թումանեանների ձեռքով խմբագրուած «Нов. об.» լրագիրը բռնած ունէր Կովկասի ռուս մամուլի մէջ իւր ուրոյն տեղը մի կողմից իւր լուրջ ուղղութեամբ ընդհանուր հասարակական հարցերի վերաբերութեամբ և միւս կողմից իւրովսանն մաքառելով օտարազգի հայատեացների դէմ և առողջ դաղափարներ տարածելով այդ խեղճ ազգի նկատմամբ ռուս հասարակութեան մէջ։

Եղբ. Թումանեանների գրական ասպարիզից հեռանալու առթիւ տեղական մամուլի ներկայացուցիչները յարգել են նոցա նոյեմբերի 27-ին մի ընթրիքով։ Ընթրիքին մասնակցել են տեղական բոլոր ազգերի մամուլի ներկայացուցիչները և բաւական ստուար բազմութիւն համակրողներ։ Ստացուել են բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ և նամակներ. իսկ ընթրիքի վերջը հանդիսին ներկայ եղող հասարակութեան մէջ միտք է յայտնուել հանգանակութիւն կատարել մամուլի պաշտպայ ֆոնդի համար։

Մենք մեր ձայնը միացնելով բոլոր յիշեալ յարգողների և համակրողների շնորհաւորութեանց հետ, կարող ենք միայն ցաւել, որ ընթրիքի կարգադրիչ մասնաժողովը պացել էր հրաւէր ուղարկել նաև «Լումայի» խմբագրութեան, որով մենք զրկուած եղանք մեր ջերմ յարգանքները դէպի այդ գաղափարական գործիչները անձամբ մատուցանել նոցա։